Գլխավոր տեղեկություն	
Համար	N 548-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (31.05.2016-25.08.2022)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	06.04.2016
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	30.05.2016
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	31.05.2016
Ուժը կորցնելու ամսաթիվ	25.08.2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 ապրիլի 2016 թվականի N 548-Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածը և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Էջմիածնի խճուղի հասցեում գտնվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) անհատույց օգտագործման իրավունքով ամրացված 49,524 հեկտար հողամասից 5.0 հեկտար մակերեսով հողամասը «այսուհետ՝ գույք» հետ վերցնել և նվիրաբերել «Հանրի Արմին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ ընկերության կողմից մշակված, նորագույն գիտական տեխնոլոգիայի վրա հիմնված (գազը/օդը հեղուկացվում է, կատարվում է ռեկուպերատիվ ջերմափոխանակություն, ապա արևային էներգիայի օգնությամբ աշխատանքային գազը ճնշումային գազի վերածվելով աշխատեցնում է տուրբինան և գեներատորը)՝ 2 ՄՎտ հզորությամբ առաջնեկային էլեկտրակայանի կառուցման ծրագրի իրագործման նպատակով սույն որոշման հավելվածում նշված բիզնես նախագծին համապատասխան գործունեություն ծավալելու համար:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կազմից առանձնացման ենթակա հողամասի չափագրման, բաժանման և որպես առանձին գույքային միավորներ գրանցման աշխատանքները՝ դրանք իրականացնելով ընկերության միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքներն ավարտելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել կազմակերպության հետ կնքված պայմանագրում սույն որոշման 1-ին կետից բխող համաձայնագրի կնքման գործընթացը՝ համաձայնագրի կնքման համար հիմք ընդունելով հողամասի չափագրման, բաժանման արդյունքում ստացված և գրանցման վկայականներում նշված մակերեսները.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքներն ավարտելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և պայմանագրի կնքումը (պայմանագրի կնքման համար հիմք ընդունելով հողամասի չափագրման, բաժանման արդյունքում ստացված և գրանցման վկայականներում նշված մակերեսները)՝ դրանում սահմանելով, որ՝

ա. ընկերությունը պարտավորվում է պայմանագրի կնքումից հետո նվիրաբերված տարածքում սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով երեք տարվա ընթացքում իրականացնել ներդրումներ՝ ներկայացված բիզնես նախագծի համաձայն, ընդ որում, նախագծում նշված աշխատանքները չկատարելու դեպքում պայմանագիրը ենթակա է լուծման,

բ. պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման ընկերության միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Հ. Աբրահամյան**

2016 թ. մայիսի 30
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
ապրիլի 6-ի N 548-Ա որոշման

Բ Ի Զ Ն Ե Ս Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՄԻՆՉԵՎ 2 ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԵԿԱՅԻՆ ԱՐԵՎԱՋԵՐՄԱՅԻՆ ՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Բովանդակություն

Բիզնես նախագիծ---------- 3
Բիզնես նախագծի նպատակը և նկարագիրը ---------- 3
Բիզնես նախագծի կազմակերպչական ծրագիրը---------- 4
Ներդրումային ծրագիր---------- 5

Բ Ի Զ Ն Ե Ս Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Կազմակերպություն՝ «Հանրի Արմին» ՍՊԸ

Նախագծի իրագործման նախնական վայրը և հասցեն՝ քաղ. Աշտարակ, Էջմիածնի խճուղի N 2, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հողատարածքում (5 հեկտար):

Նախագծի սկիզբ է համարվում ֆինանսավորման սկիզբը:

Ընկերության տնօրեն՝ Հանրիբալ Հարությունյան

Բիզնես նախագծի նպատակը և նկարագիրը

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրությունն ապահովում են Մեծամորի ատոմակայանը (43%), ջերմակայանները (24%), հիդրոկայանները (33%):

Այսինքն՝ հանրապետությունում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի 67% -ը (ատոմակայանը և ջերմակայանները) հիմնված է ներկրված վառելիքի վրա:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ «Հանրի Արմին» ՍՊԸ-ում մշակվել է այլընտրանքային էներգիայի ստացման նորագույն տեխնոլոգիա և այդ

ուղղությամբ կատարված գիտական հետազոտությունները հնարավորություն են տալիս կազմակերպելու էլեկտրաէներգիայի արտադրություն մինչև 2 Մվտ հզորության առաջնեկային, արևաջերմային տուրբինային էլեկտրակայան առանց վառելիքի օգտագործման:

Ընկերությունն իր առջև դրված նպատակը դիտարկել է առարկայական և արժեքային տեսանկյուններից և ընտրել է մի ռազմավարություն, որը կօգնի հասնելու նպատակին՝ էլեկտրակայանի կառուցմանը:

Էլեկտրակայանը կունենա հետևյալ հիմնական ցուցանիշները՝

Դրվածքային հզորությունը՝ N դր = 2000 կՎտ

Միջին տարեկան վաճառվող էլեկտրաէներգիայի քանակը՝ 5760000 կՎտ

Տուրբին գեներատորների քանակը՝ n= 4

Ստորև ներկայացվում է մինչև 2 Մվտ հզորության առաջնեկային, արևաջերմային տուրբինային էլեկտրակայանի կառուցման կազմակերպչական ծրագիրը:

Բիզնես նախագծի կազմակերպչական ծրագիրը

Անվանումը	**I տարի**				**II տարի**				**III տարի**			
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
Նախագծային աշխատանքներ	✓	✓										
Արտադրական տեղամասի նախապատրաստումը			✓	✓								
Շինարարության զրոյական ցիկլ			✓	✓	✓	✓						
Ընդհանուր շին. աշխատանքներ			✓	✓	✓	✓	✓					
Ինֆրաստրուկտուրայի ստեղծում (ադմինիստրատիվ շենքի գազի, ջրի, էլ.ենթակայանի, ճան-ի, ներքին էլ. և ջերմ. ցանցեր)			✓	✓	✓	✓	✓					
Հարթակների պատրաստում, սարքավորումների մոնտաժման աշխ. նախապատրաստում								✓				
Հիմնական և օժանդակ սարքավորումների պատվիրում			✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓		
Հիմնական և օժանդակ սարքավորումների մատակարարում				✓	✓	✓	✓	✓	✓	✓		
Մոնտաժային աշխատանքներ և որակի վերահսկում						✓	✓	✓	✓	✓		
Մոնտաժման, թողարկման աշխատանքներ								✓	✓	✓	✓	✓
Թողարկման փորձարկում										✓	✓	✓
Սարքավորումների նախապատրաստում թողարկման												✓
Համաձայնեցում տեղական ինքնակառավարման մար. հետ			✓	✓	✓	✓						
Տեղական էլ. ցանցի հետ համաձայնեցում			✓	✓	✓	✓						
Փաստաթղթավորման թույլտվության ձեռքբերում (հակահրդեհային, բնապահպ.)					✓	✓	✓	✓				
Աշխատակազմի պատրաստվածություն											✓	
Գործարկում, թողարկում												✓

Էլեկտրակայանի մասն են կազմում հետևյալ հիմնական կառույցները՝

- օդի հեղուկացման և գազիֆիկացման,
- արևաջերմային,
- տուրբինագեներատորային,
- բարձր լարման 35 կՎ ենթակայան,
- բարձր լարման 35 կՎ օդային գիծ:

Կազմակերպությունը նախատեսում է՝

Հիմնական սարքավորումների ձեռքբերման նպատակով հանդիպել խոշոր լիզինգային կազմակերպությունների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր՝ ամրագրելով, որ լիզինգային վարկի վճարումը կարող է կատարվել էլեկտրակայանի գործարկման պահից:

Նախագծային, շինարարական, մոնտաժային աշխատանքների հետ կապված ֆինանսական միջոցներն ապահովել վարկային ներդրումների միջոցով:

Ներդրումային ծրագիր

ԱՄՆ-ի դոլար

Անվանումը	**I տարի**				**II տարի**				**III տարի**				Ընդամենը
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
Նախագծային աշխատանքներ	100000	130000											230000
Զրոյական ցիկլ և ընդհանուր շինարարական աշխատանքներ			140000		100000	80000	30000						350000
Ինֆրաստրուկտուրայի ստեղծում			50000	30000	50000								130000
Հիմնական սարքավորումներ		300000	1100000	1200000	100000								2700000
Օժանդակ սարքավորումների պատվերներ					100000	50000	50000						200000
Սարքավորումների			10000	10000	10000	5000	5000						40000

տրանսպորտային ծախսեր													
Սարքավորումների մոնտաժման աշխատանքներ							180000			20000			200000
Տեղակայման, թողարկման աշխատանքներ										70000	50000		120000
Աշխատակազմի ուսուցում											22000	8000	30000
Ընդամենը	100000	430000	1300000	1240000	360000	135000	265000			90000	72000	8000	4000000

Հիմնական սարքավորումների կազմն իրենց արժեքներով (ԱՄՆ-ի դոլար)

Գեներատոր տուրբինա՝ 4 հատ *300000=1200000
Օդի հեղուկացման կայան՝ 1 հատ *1100000=1100000
35 կՎ լարման ենթակայան՝ 1 հատ *230000=230000
35 կՎ օդային գիծ՝ 1 հատ *50000=50000
Արևային տաքացման համակարգ՝ 4 հատ *30000=120000

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**